

Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության (ՀՀՄԿ) անդամակցության կարևորությունը

Ներածություն

ՀՀՄԿ 60-ից ավելի տարիների գործունեության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հետադարձ հայացք նետել նրա անցած ուղու վրա և բնորոշել, թե ինչի հիման վրա է կազմակերպությունն ունեցել անդամների և գործընկերների զգալի աճ: ՀՀՄԿ-ն հետազոտություն և հարցում է իրականացրել իր անդամներից՝ պարզելու, թե որն է ՀՀՄԿ անդամ լինելու նրանց առավելագույն օգուտը: Այս ամենը, մեր գործընկերների կողմից ստացված մի շարք արձագանքների հետ միասին, ներկայացված է սույն փաստաթղթում՝ առավել լավ բնորոշելու համար, թե ինչ հնարավորություններ է ՀՀՄԿ-ն առաջարկում իր 61 անդամ երկիրներին/տարածաշրջաններին և 9 միջազգային արդյունաբերական գործընկերներին:

ՀՀՄԿ կառուցվածքի, պատմության և գործունեության առավել համապարփակ նկարագրի համար կարող եք այցելել www.worldskills.org կայքը:

Ինչպես ցանկացած կազմակերպությունում անդամակցությունը, ՀՀՄԿ-ին պատկանելու արժեքը ցույց է տալիս անդամների ընդգրկումը և ՀՀՄԿ ֆորումներին և գործունեությանը նրանց մասնակցության աստիճանը: Այնուամենայնիվ, նրանց համար, ովքեր ընտրում են առաջարկվող օգուտների ամբողջական շարքից օգտվելը, ՀՀՄԿ-ի արժեքն ակնհայտորեն բարձր է:

Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպությունն իր անդամներին տրամադրում է հետևյալ հնարավորությունները՝

1. համեմատել ձեր երկրում/տարածաշրջանում ուսուցանվող հմտությունները՝ համաշխարհային ամենաբարձր հենանիշի հետ, որոնք սահմանվել են 45 հմտությունների ոլորտում առավելագույն զարգացած հմտությունների մակարդակ ունեցող երկրների/տարածաշրջանների կողմից:

2. իրենց երկրների/տարածաշրջանների փորձագետների համար ոչ միայն ձեռք բերել հենանիշները, այլև օգնել հիմնելու համաշխարհային հենանիշներ՝ մասնակցելով փորձագետների քննարկումներին:
3. անդամ երկրների/տարածաշրջանների երիտասարդ հմուտ մասնագետների համար փորձարկել իրենց «իրական աշխարհի» հմտությունները՝ ընդդեմ աշխարհի առավել հմուտ մրցակիցների, մասնակցելով ՀՀՄԿ եզակի մրցույթին՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:
4. օգուտ քաղել ժամանակակից «Մրցույթի տեղեկատվական համակարգի» օգտագործման թույլտվությունից, ինչպես նաև՝ շարունակական թարմացումներից և տեխնիկական օժանդակություններից
5. օգուտ ստանալ ՀՀՄԿ անդամների կատարած ներդրումներից՝ նոր հմտությունների մրցույթներ կազմակերպելու համար (շարժական ռոբոտներ, օդանավերի տեխնիկական սպասարկում, և այլն)
6. փորձագետներին և երիտասարդ մասնագետներին հնարավորություն տալ ձեռք բերել միջազգային փորձ՝ այլ անդամ երկրների/տարածաշրջանների ազգային մրցույթներին մասնակցելով:
7. օգտագործել ՀՀՄԿ պրեմիերա փորձի ծրագիրը, որը հասանելի է ՀՀՄԿ մրցույթների ընթացքում, որպեսզի այն ուսուցանի քաղաքական, արդյունաբերական, կրթական և աշխատանքային բնագավառների՝ իրենց ավագ առաջնորդներին, հմտության կարևորության մասին:
8. իրենց երկրների/տարածաշրջանների բոլոր երիտասարդ հմուտ մասնագետներին առաջարկել աչքի ընկնել և օգտագործել միջազգային մակարդակի մեդալ շահելու և դրանից բխող հեղինակություն ձեռք բերելու հնարավորությունը
9. անդամներին՝ անձամբ ծանոթանալ ՀՀՄԿ մոտ 58 անդամների հմտությունների ուսումնական հաստատությունների ավագ մենեջերների հետ (տես՝ հավելված Ա) և նրանց գիտելիքներից և խորհուրդներից օգուտ քաղել՝ գործընկերական միջավայրում

10. ՀՀՄԿ առաջնորդների տարեկան ֆորումին մասնակցելով՝ հմտությունների ուսուցման ոլորտում որոշ առաջատար գիտակներից տեղեկություններ ստանալ
11. փորձագետներից և պատվիրակներից օգուտ ստանալ անձնական զարգացման համար՝ մասնակցելով շարունակ զարգացող միջազգային բազմամշակութային միջավայրի իրադարձություններին:
12. անդամ երկրների/տարածաշրջանների երիտասարդներին հնարավորություն տալ մրցույթներին մասնակցելու միջոցով ստեղծել ընկերների և կրնտակտների համաշխարհային ցանց, հմտության՝ իրենց ոլորտում:
13. օգտվել ՀՀՄԿ ապրանքանիշի հնարավորություններից՝ հմտությունների գերազանցության հասնելու համար, որն իր հերթին օգնում է նրանց խթանել այդ հմտություններն իրենց երկրներում/տարածաշրջաններում՝ ցույց տալով այն հսկայական արժեքը, որն այժմ կապված է համաշխարհային տեխնիկական և մասնագիտական կրթության և ուսուցման հմտությունների հետ:
14. ուղղակիորեն օգուտ ստանալ հմտությունների զարգացման համար այն անդամների կողմից կատարվող հսկայական ներդրումներից, որոնք հյուրընկալում են մրցույթները յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ և աջակցում ՀՀՄԿ մտավոր սեփականության բազմաթիվ այլ տարրերին:
15. ավելացնել երիտասարդ մասնագետների աշխատանքային հնարավորությունները և բարձրացնել իրենց կրթական հաստատությունների վարկանիշը՝ իրենց լավագույն փորձառու չեմպիոններին ցուցադրելով **ՀՀՄԿ Պորտալում**:
16. հմտությունների կրթության ոլորտում ընթանալ զարգացումներին համահունչ՝ պարբերաբար ստանալով **ՀՀՄԿ էլեկտրոնային թերթը**:
17. սովորել այլ անդամներից և օգտագործել տարբեր երկրների ազգային ծրագրերի շրջանակներում ձեռք բերված փորձը՝ հմտությունները խթանելու և զարգացնելու համար:
18. օգուտ ստանալ տարբեր հմտությունների խնդիրների վերաբերյալ ՀՀՄԿ-ի կողմից կատարված վերլուծությունից:

19. մուտքի թույլտվություն ունենալ ՀՀՄԿ-ի կողմից կազմած և ստեղծած ողջ մտավոր սեփականության նկատմամբ:
20. հնարավորություն ունենալ կապ հաստատել ՀՀՄԿ միջազգային արդյունաբերական գործընկերների կողմից ներկայացվող միջազգային կորպորացիաների տեղական մասնաճյուղերի հետ:
21. ձեր երկրի/տարածաշրջանի երիտասարդ մանագետներին ձայն տալ՝ մասնակցելով ՀՀՄԿ երիտասարդական ֆորումում, որը գումարվում է յուրաքանչյուր ոչ մրցութային տարի:

Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության անդամների արձագանքները

Հաճախ կազմակերպության արժեքը հասկանալու լավագույն ճանապարհը ՀՀՄԿ մասնակիցների անմիջական փորձի և նրանց ձեռք բերած օգուտների վերաբերյալ գրառումներ կատարելն է:

«Որպես ՀՀՄԿ Կանադայի անդամ կազմակերպություն, հմտություններ/հրավասություններ Կանադան պատիվ ունի ամբողջ աշխարհում կապ հաստատել առևտրային և տեխնոլոգիական արդյունաբերության փորձագետների հետ: Հմտությունների շարժումը Կանադայում կընդլայնվի համաշխարհային կապերի միջոցով, որն ընդգծում է երիտասարդության համար այս կարիերաների կարևորությունն ու արժեքը: Հյուրընկալելով ՀՀՄԿ Մրցույթը Կանադայում, մեր երիտասարդները, ուսուցիչները և արտադրության գործընկերները հնարավորություն կունենան անմիջականորեն տեսնելու, որ առևտրում և տեխնոլոգիայում կարիերաները բարձր են գնահատվում, ընդունվում և կարևորվում են թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական բարգավաճման տեսանկյունից ոչ միայն Կանադայում, այլև համաշխարհային շուկայում»:

Թերրի Քուք, Պաշտոնական Պատվիրակ, Կանադա

Ֆրանսիան Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության հպարտ անդամ է, քանի որ ունի հնարավորություն՝

- համաշխարհային մակարդակով կապ ունենալ այն կազմակերպությունների հետ, որոնք կիսում են մեր նպատակներն ու հետաքրքրությունները. երիտասարդների և հմտությունների խթանման գործընթացում
- օգտագործել մրցույթը որպես գործիք՝ տեխնիկական գործողությունները գնահատելու համար, միևնույն ժամանակ ստեղծելով մարդասիրական և բարեկամական տրամադրություն՝ միջազգային մակարդակով
- ՀՀՄԿ միջազգային ապրանքանիշի օգտագործումը հնարավորություն է տալիս նոր հովանավորներ ներգրավել, որը կօգնի մեզ ձեռք բերել նոր մեթոդներ և ապրանքներ՝ հմտությունների հետագա արտադրողականությունը բարձրացնելու համար»:

*Իվան Վալենտինուցի, Համաշխարհային հմտություններ գործադիր տնօրեն,
Ֆրանսիա*

«ՀՀՄԿ մրցույթը հմտությունների գերազանցության գագաթնակետն է:

1993թ-ից լինելով ՀՀՄԿ անդամ և մասնակցելով ՀՀՄԿ ութ մրցույթներին Մինգապուրը բարձրացրել է տեխնիկական կրթության վարկանիշը: Ներկայացված հմտությունների նոր շարքով, երիտասարդությանը ուսուցման հնարավորություն տալով, մրցույթը, անշուշտ, բարձրացրել է մասնագիտական հմտությունների արժեքը: Մեր մրցակիցների համար ՀՀՄԿ մրցույթը շրջադարձային է: Շատերն իրենց լավագույն արդյունքները ցույց տվեցին այդ լարված միջազգային մրցույթի ժամանակ, իսկ շատերն էլ իրենց կարիերայում մեծ հաջողություններ ունեցան»:

ՏԿԻ, Մինգապուր

Միջազգային արդյունաբերական գործընկերների արձագանքը

Ստորև ներկայացնում ենք մեր 10 միջազգային արդյունաբերական գործընկերների հավաքական մեջբերումը:

«Որպես միջազգային գործընկերներ, մենք արդեն անհատապես ներգրավված ենք կրթական և ուսումնական նախաձեռնություններում՝ մեր տարբեր շուկաներում: Մա մեզ հնարավորություն է տալիս հետադարձ կապ հաստատել մեր հաճախորդների, արդյունաբերության գործընկերների, ասոցիացիաների, աշխատանքային կազմակերպությունների և ուսուցիչների հետ այն մասին, թե ինչ է անհրաժեշտ տվյալ աշխատատեղի հմտությունների համար: Դա նաև հնարավորություն է տալիս հետադարձ կապ հաստատել կառավարության և կրթական ոլորտի հետ, տեղեկացնելով արդյունաբերական տենդենցների, պրակտիկաների և տեխնոլոգիաների վերաբերյալ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ծրագրերի և պահանջվող սարքերի ու սարքավորումների վրա: Իսկ իրականությունը ավանդական հմտությունների և ներկայումս պահանջարկ ունեցող հմտությունների միջև դատարկ տարածությունն է:

Ավանդական հմտություններում տեղի է ունենում փոխակերպում, ինչպես նաև մի շարք նոր հմտությունների ձևավորում, գումարած այդ երկուսի միաձուլումը: Այնուհետև գոյություն ունեն նաև զարգացող երկրներ և արագ զարգացող շուկաներ, ինչպիսիք են Չինաստանը, Հնդկաստանը և Արևելյան Եվրոպայի երկրները: Սրանք իրենցից ներկայացնում են եզակի մարտահրավերներ, քանի որ տեխնոլոգիաները և ենթակառուցվածքները լինելով մասնատված, հաճախ գերազանցում են ընթացիկ հիմնական տեխնոլոգիաներին և պահանջում նոր հմտությունների համակարգ, անձնակազմի ուսուցում և տեղում վերապատրաստված աշխատողներ:

Հմտություններից շատերը և անհրաժեշտ աշխատողները նույնպես ազդեցություն են կրում այնպիսի գործոններից, ինչպիսիք են կորպորատիվ արտադրողականությունը, կայունությունը և ներդրումային նպատակները:

Մա ևս մեծ խնդիր է առաջացնում, որն ավելի մեծ է քան փորձառու աշխատուժի պակասը և ավանդական քոլեջների ծրագրերի կողմից ընտրված ճիշտ կրթությունը: Դա ոչ միայն երիտասարդ, թարմ աշխատողներին աշխատանքային շուկա բերելու խնդիրն է, այլ ներկայիս աշխատուժին վերապատրաստել և «վերահմուտ» դարձնելը, որոնք հաճախ պատրաստ չեն նոր մեթոդներով աշխատելուն:

Բոլորս միասին, որպես գլոբալ գործընկերներ, դիտում ենք ՀՀՄԿ-ն որպես այսպես կոչված «պորտալ-դեպի-աշխարհ», որը հմտությունների համար արժեք է ստեղծում, ինչպես միջազգային արժույթը, և կառուցում միջազգային հմուտ աշխատուժ՝ օգտագործելով նշված հատկանիշներից շատերը: Մենք կարող ենք առավել մեծ ազդեցություն ունենալ, զարգացնելով լավագույն պրակտիկաներն ու չափանիշները, որը կարող է տարածվել աշխարհով մեկ՝ արդյունաբերության բոլոր հատվածներում: Մեր ապագա տնտեսական առողջությունը կախված է հմուտ աշխատուժից: Ահա թե ինչու ենք մենք այստեղ: Ավելի պարզ ասած՝ առանց հմուտ աշխատողների, չկա՝ տնտեսություն»:

ՀՀՄԿ միջազգային արդյունաբերական գործընկերներ